

4

891.990  
9.-40




2011 - 05 97

№ 7 ՀՐԱՄԱՆՈՒԹԻՒՆ ԱԳՐԻԿ-ՏԵՐԱԾ 107 №



ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՏԸ

ԵՐԱ ՏԻ



№ 107

Հ Ա Տ Ա Ր Ա Կ Ա Լ Ի Թ Ի Ւ Ե Վ Լ Բ Ի Հ Ր - Տ Ա Ր Ա Զ Ի

107 №

891.99.5

9-40

Զ Ա Ր Ո Ւ Հ Ի Ւ

4-3

## Կ Ա Մ Ք Ի Ո Յ Ժ Ը Լ

1. Խոհեմական կամքը լինէր: 2. Ես ստախու չեմ: 3. Շշմարտութիւնը յարձագաց: 4. Գերմաներէնի ուսուցչի ծննդեան տարեղարձ: 5. Կամքի ոյժը:



## Ն Ա Պ Ո Լ Ե Օ Ն




## Բ Ո Ւ Ա Պ Ա Ր Տ

Թ Ի Ֆ Լ Ի Ւ

Տպարան «Հերուվիս», Գրաֆուկայտ 6. Տելեփոն Ա 566.

1912





## ԿԱՄՔԻ ՈՅԺԸՆ

ՆԱՊՈԼԵՕՆ ԲՈՆԱՊԱՐՅ

Ա.

ԹԵ ԻՄ ԿԱՄՔԸ ԼԻՆԵՐ



Այսօր լրացաւ իմ եօթը տարին։ Եօթը տարեկանն էլ մանուկ չէ։ Նա ոտք դնում է պատահնեկական հասակի մէջ... Ինքն իրան այսպէս խօսելով, մի նիհար, կարձահասակ, մեծ գլխանի մանուկ մտաւ այգու հանդիպիքարանձաւը։ Աստւած վկայ, որ սպարտացիները տղամարդիկ էին։ Երանի ես էլ սպարտացի լինէի։ Նրանք իմ հասակակիցներին չէին թողնում, որ կին-արմատները կրթեն, այլ իրանք, այդ ազգի քաջ տղամարդիկն էին կրթում և վարժեցնում։ Իսկ մեր տանը հայրս, մայրս, սարկաւագ քեռիս, հօրեղբայրս, Յովսէփը, էլիզապէդը, էլիզ քոյրս, որ մի տարով էլ ինձանից վորը է, էն կաթնակեր Պոլիտը, նա էլ մինչև անգամ խառնում էր իմ դաստիարակչական գործի մէջ, նրան էլ մինչև անգամ ձայն է տրւում իմ մասին կարծիք յայտնել և վճիռներ տալ։ Ա՛խ, եթէ ինձ իմ կամքին թողնէին։ — Ի՞նչ կանէիր, եթէ քեզ քո կամքին թողնէին, զլուխը մեկնելով քարանձաւի մէջ, հաշցրեց սիրուն էլիզը։ — Նախ և առաջ կըպատուիրէի քեզ, որ միւս անգամ դռների ճեղքերից ականջ չըդնես։ — Այստեղ դռներ չըկան, պատասխանեց էլիզը։ — Ուրեմն աւելի վատ։ Սրանց վիճարանութիւնը ընդհատւեց կանացի մի ձայնով։ Շուտով երեաց և հէնց ինքը այդ խօսող կինը։ Սա բարձրահասակ կին

Եր, ձեռքին մի զամբիւղ լիքը տանձ ու խնձորով:

Նիհար մանուկը, որ իր քարանձաւի միջից դուրս էր եկել և  
կանգնած էր քրոջ մօտ, ձեռքը մեկնեց դէպի զամբիւղը:

— Ի՞նչ ես անում, սարկաւագի այգուցն է:

Կարծես, երեխայի ձեռքը մի մեղրաճանձ խայթեց, նա խսկոյն  
ձեռքը հանեց զամբիւղից:

— Ահա, հէնց այդպէս, զախեցար համ. բաւական է սարկաւագի  
անունը, որ ամենքդ էլ կարգ ու կանոն ճանաչէք:

— Ես սկի չեմ զախում, ինչու պիտի զախենամ, պատասխանեց  
նիհար մանուկը:

— Ապա, եթէ չես զախենում, ձեռքդ մեկնիր և մի խնձոր վեր առ:


— Չեմ կամենում:

— Աւելի լաւ չէր լինիլ, եթէ ասես զախենում եմ:

— Հաւատացիր, որ չեմ զախենում, այլ այնպէս, չեմ կամենում:


— Գուցէ դու այնպէս ես կարծում թէ ես էլ եմ զախենում,  
ասաց էլիզը, ուղիղ բարձրահասակ կնոջը նայելով:

— Այ, տուն կը հասնենք, կը տեսնես վեր կառնեմ, կուտեմ, թէ  
չէ. ես էլիզը չեմ լինիլ, եթէ չուտեմ և քեզ ցոյց տամ, որ զախկոտ  
չեմ. Փառք Աստծու մայրիկն էլ տանը չէ:



Այաշիօ (Կորսիկա)

Այս տանն է ծնւել ու մնել նա-  
պուտօն Բօնապարտը:



## ԵՍ ՍՏԱԽՈՍ ՉԵՄ

Արևը վաղուց մայր էր մտել. Օրը կամաց-կա-  
մաց սկսում էր մթնել. Նիհար մեծ գլխանի մա-  
նուկը դեռ իր քարանձաւի մէջ ձեռքերը կրծքին  
ծալած անց ու դարձ էր անում և մտորում. Այս  
եթէ ես իմ կամքին լինէի... Վերջը սթափւելով  
դուրս եկաւ իր այդ առանձնարանից և ուղերձեց  
դէպի տռն:

Նա սաստիկ ծարաւել էր: Տուն հաս-  
նելով ուղղակի մտաւ սեղանատունը, որ  
այնտեղից մի բաժակ առնէ և ջուր խմէ:  
Հէնց էղ միջոցին սեղանատանը պահա-  
րանի դուռը մէկը փակեց ու ոտքերի  
ծայրերով դուրս պրծաւ սենեակից: Այս-  
տեղ դեռ ճրագ չըկար, սակայն նիհար  
մանուկը մթի մէջ նկատեց, որ փախչողը սպիտակ հագուստով ի-  
րանց երեխաներից մէկն էր, բայց թէ որը՝ նա լաւ չընկատեց և սկի  
չընետաքրքրւեց էլ: Բայց պահարանին մօտենալով, տղան տեսաւ  
սարկաւագ քեռու այգուց բերած զամբիւղը կիսատ: Այդ նրան սաս-  
տիկ զարմացրեց և այնպէս շշկւեց, որ մոռացաւ թէ ինչու համար  
էր ինքն եկել այստեղ: Այս ովկ համարձակւեց... ովկ կը յանդգնէր. . .  
ինքն իրան հարց էր տալիս մանուկը:

— Ի՞նչ ես անում դու այստեղ. դու չըգիտես, որ ձեզ, երեխա-  
ներիդ արգելած է ինքնապուխ սեղանատուն մտնել և ուղածներդ  
առնել: Այս խօսողը հէնց ինքը սարկաւագ քեռին էր, արծւա-  
նման հայեցքով մի հաստափոր ծերունի:

— Ոչինչ չեմ վեր առել:

Եւ շշկւելուց, խեղճ երեխան, կարծելով թէ իրան պիտի մեղա-  
զրեն գողութեան մէջ, մինչև ականջները կարմրեց: Նրա այդպէս  
վրդովկիլ տեսնելով ծերունին ասաց.

— Սուտ մի խօսիլ:

— Ես երբէք սուտ չեմ խօսում, քեռիս, պատասխանեց մանուկը:  
Երեխայի այդ համարձակ պատասխանը նա յանդգնութիւն հա-  
մարեց ու ասաց.

— Դեռ չըգիտեմ թէ բանը ինչումն է, բայց հէնց որ իմացայ, այն ժամանակ վայն եկել է, քեզ տարել։ Աւելի լաւ է հէնց այժմեանից խոստովանիր եղելութիւնը։

— Եկայ այստեղ ջուր խմելու։

— Չես էլ ամաչում, սուտ ես խօսում. ջուր խմելում ի՞նչ յանցանք կայ։ Եթէ այդպէս է, ի՞նչու ես այդպէս կարմրել։

— Հաւատացիր քեռիս, որ . . .

— Եւ դու կամենում ես ինձ էլ հաւատացնել, գլուխը շարժելով, ծերունին ընդհատեց նրա խօսքը։ Շատ լաւ։ Բայց էլի կրկնում եմ, ձեռից չըպիտի պրծնես, երբ տեղեկանամ թէ ինչ է գործածդյանցանքը։ Բայց իմացած լինէս տղաս, որ այն ժամանակ էլ ներումն չի լինելու։

Հէնց էս միջոցին աղախինը ճրագը ներս բերաւ և նրա ետևից մտան կարլ Բօնապարտը և իր աներձագը։ Արանք մի ինչոր տաք վիճարանութեան մէջ էին։ Սարկաւագն էլ միջամտեց նրանց քաղաքական վիճարանութեանը և մոռացաւ երեխային, որ սենեակի մի անկիւնում լուռ ու մունջ մնացել էլ կանգնած։ Զայրոյթից մանկան սիրտը սկսել էր աւելի արագ բարախիլ։ Աղախինը, որի անունը Սէւրի էր, եկաւ ընթրիքի համար սեղան պատրաստելու։


— Տէր ողորմեա, էս ովկ է վեր առել բացականչեց աղախինը պահարանին մօտենալով։ Բոլորեքեան աշքները դէպի պահարանը դարձին, իսկ սարկաւագը տեղից վեր կենալով մօտեցաւ սենեակի անկիւնում արձանացած մանկանը ու ասաց.

— Ահա թէ որտեղ է գաղտնիքը, ուրեմն . . .

— Կրկնում եմ, որ ես ձեռք չեմ տեկ այդ գամբիւղին, քեռու երեսին համարձակ նայելով, պատասխանեց մանուկը։

— Կանչեցէք երեխաներին։

Սէւրին մի երկու րօպէ չանցած բոլոր երեխաներին երկու աղջիկ ու երեք էլ տղայ ներս բերաւ սեղանատունը։



## ՀԱՐՑ ՈՒ ՓՈՐՁ

— Ո՞վ է սարկաւագի զամբիւղից ինձոր հանել, հարցրեց երեխաների հայրը, կարլ Բօնապարտը։

— Ես չեմ հանել, ես էլ չեմ հանել, ես էլ . . . էլիզի ձայնը համարեաթէ չըլսւեց։

— Իսկ դու, պարոն։

— Չէոր ես արդէն ասացի, որ բոլորովին ձեռք չեմ տւել։

— Սուտ մի խօսիլ, մէջ մտաւ Սէւրին, որ արդէն սրանց մօտ երկար տարի ծառայելով, ձեռք էր բերել ընտանիքի անդամի արտօնութիւն։

— Եթէ դու կին չըլինէիր . . . պատասխանեց մեղադրւող մանուկը,

բոռնցքը ցոյց տալով։

— Է՞դ ինչ ես անում, բղաւեց հայրը։

— Ի հարկէ, որ դու ես վեր առել, պնդեց աղախինը։ Բացի քեզնից ովկ է այստեղ մտել։ Ամբողջ ժամանակ ես նախասենեակումն եմ եղել. Մէկ էլ, շարունակեց աղախինը, նորին Արժանապատութիւնն է, մտել։

— Տարաբախտաբար ես չեմ վեր առել, պատասխանեց պատկառելի ծերունին։ Երանի չէ՞ր լինիլ որ ես լինէի վեր առած և կարող լինէի այդ յամառ տղին պատժից ազատել։

— Բայց միթէ պատուհանով անկարելի է մտնել, քաշւելով հարցրեց մանուկը և չըպատմեց իր տեսածը, որպէսզի իրան լրտես չըհամարեն։

— Սուս կաց, բացի քեզնից ոչոք չէ մտել այստեղ, պատասխանեց աղախինը։

— Աւելի լաւ չէ, զաւակս, որ խոստովանես մեղքդ։

— Ազնիւ խօսք, հայրիկ, որ ես ոչինչ չեմ վեր առել։

— Խոստովանիր, հոգիս, միջամտեց և հօրեղբայրը, մեղայ եկ և սարկաւագը քեզ կըներէ։

— Այն, այն, կըներեմ, հաստատեց և ինքը սարկաւագը:  
— Բայց որ ես չեմ վեր առել, ի՞նչպէս ասեմ թէ վեր եմ առել.  
Չեմ կամենում սուտ խօսել:  
— Խոստովանիր, ասացին և միւս եղբայրները:  
— Ի՞նչ կայ, սիրելի եղբայր, թոթովեց և փոքրիկ Պօլիէտը, ասա  
ես եմ վեր առել ու պրծի: Զէոր խոստանում են ներել ու չը-  
պատժել:  
Ելիզը միայն լուռ էր և սիրտ չէր անում եղբօր երեսին նայելու:  
— Ահա քեզ եօթը ըոպէ ժամանակ, ասաց սարկաւագը: Այժմ  
ութից ուղիղ եօթը ըոպէ պակաս է, եթէ մինչև ութի լրանալը  
խոստովանես, լաւ. ներում կստանաս, իսկ եթէ ոչ, պիտի ծանօթա-  
նաս խարազանի հետ:  
— Խարազանը շների համար է, քեռի, և ոչ թէ երեխաների, ա-  
սաց մեղադրւած մանուկը:  
— Եւ այն երեխաների համար էլ, որոնք սուտ են խօսում, և  
խարում, պատասխանեց հայրը:  
— Եթէ այդպէս է, ուրեմն ես բոլորովին արժանի չեմ խարա-  
զանի հարւածներին, որովհետև ոչ սուտ խօսեցի և ոչ էլ խարեցի:  
Ութը ժամը խփեց: Սակայն յամառ և իրան ասածի մանուկը  
ձեռքերը կրծքին խաչած, լուռ մնացել էր կանգնած: Ընթրիքը պատ-  
րաստ էր: Բոլորեքեան նստեցին սեղանի շուրջը: Փոքրիկ Պօլիէտը  
կրկին մօտեցաւ եղբօրը և նրա ականջին փսփսաց:  
— Երբէք, պատասխանեց մեղադրւածը: Ի՞նչու պիտի փախչեմ:  
— Որովհետև պիտի ծեծեն քեզ:  
Եղբայրը ոչինչ չըպատասխանեց, բայց քրտինքը նրա ճակատից  
հեղեղի պէս հոսում էր:  
— Դէ գնա ներումն ինդրիր:  
— Այո, այո, կրկնեցին միւս երեխաները և բոլորեքեան պատ-  
րաստ էին նրա տեղ իրանք հազար անգամ խոստովանելու և մեղայ  
գալու: Փոքրիկ Պօլիէտը նրա փէշից բոնել էր և զօռով քարշ էր տա-  
լիս, որ սարկաւագի մօտ տանի: Իսկ յամառ մանուկը անշարժ էր:  
— Թողէք դրան, խրոխտաց հօր ձայնը. երկար ժամանակ ունէր  
այդ կամակրոը խորհելու և խոստովանելու:  
— Ի՞նչ յամառն ես, միթէ այդքան ծանր բան է ներումն խընդ-  
րելը, ասաց սարկաւագը:  
— Բայց քանի որ ես մեղաւոր չեմ...  
— Դուքս տար դրան, Սէւրի, ընդհատեց հայրը, տար դրան խո-  
հանոց և ինչպէս կարդն է խարազանի տակը տուր դրան:  
Սղախինը անմեղ մանկանը քարշ տալով տարաւ խոհանոցը:  
Հարւածների ձայնը լսում էր սեղանատանը: Բայց պատժւողը  
ոչ աղաղակ, ոչ ճիչ և ոչ ախ ու վայ էր անում:



Էլիզա ու Պօլիէտը

Դ.

## ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹՈՒ Է



ետևեալ օրը կարլ Բօնապարտը պէտք էր մօտակայ ա-  
զարակը հիւր գնար: Նրա կինն էլ նախընթաց առաւօտն  
էր գնացել այնտեղ, իր ընկերունու մօտ: Հայրը ճանա-  
պարհ ընկնելիս յամառ մանկանը կրկին առաջարկեց  
սարկաւագից ներումն խնդրել:

— Ես ոչ ինձոր եմ վեր առել և ոչ էլ կերել, նոյն  
դրական պատասխանը կրկին տւառ հօրը:

— Դու դարձեալ քո երգն ես երգում, բայց ես քեզ թոյլ չեմ  
տալ այդ աստիճան յամառ լինել: Եւ եթէ խարազանը քեզ չըկարո-  
ղացաւ շտկել, անշուշտ մի այլ միջոց կըկոտրէ քո այդ կամակորու-  
թիւնը: Ահա հէնց էս ըոպէիս ելիզի, Յովսէփի, Ղուկասի հետ ճանա-  
պարհ ենք ընկնում: Մենք կըվերադառնանք երեք օրից յետոյ: Եւ  
մինչև քո խոստովանւիլը ու սարկաւագից ներում ինդրելը քեզ կը-  
տրւի ամեն օր մի կտոր չոր հաց և սառը ջուր:

Կարլ Բօնապարտը կրկին մի քաղցր հայեացք ձգեց մանկան վրայ.  
Նրա աչքերը կարծես ասում էին, խոստովանիր զաւակս և իզուր  
տեղը քեզ մի տանջիլ: Սակայն մանուկը չէր տատանում:

— Ա՛խ, բ՞նչու ներումն չըխնդրեցիր, թոթովեց փոքրիկ Պօլիէտը  
նրանց ուղևորւելուց յետոյ:

— Որովհետեւ ես մեղաւոր չեմ:

— Ուրեմն երեք էլ չըպիտի խնդրես:

— Ի հարկէ:

— Բայց որ միայն չոր հաց պիտի տան քեզ, մէկ էլ ջուր:

— Ի՞նչ անեմ. ես անզօր եմ, տան տէրը ես չեմ:

Երեք օրը անցկացաւ, բայց մանուկը դեռ անտրտունջ կլում էր  
իր պատիժը: Միայն փոքրիկ Պօլիէտը այդ օրերը չէր հեռանում  
իր սիրելի յամառ եղբօրից: Նա իր բաժին մրգեղէնից, քաղցրեղէ-  
նից շարունակ բերում էր եղբօր համար, բայց եղբայրը մինչև վերջն  
էլ հրաժարւեց ընդունելուց:

Վերադարձաւ Բօնապարտի ընտանիքը: Սարկաւագ քեռին, Սէւ-  
րին, Պօլիէտը բոլորն էլ վազեցին նրանց դիմաւորելու: Տիկին Բօ-  
նապարտը բոլորին բարեկելով տեսաւ, որ երեխաներից մէկը բացա-  
կայ էր:

Սարկաւագը եղելութիւնը պատմեց և դեռ չաւարտած, Պանիօրը

## Բացականչեց.


— Ի հարկէ, նա բ՞նչպէս կարող էր խոստովանիլ, քանի որ խըն-  
ձորը ես ու էլիզն ենք վեր առել և կերել:  
Բոլորեքնան մնացին ապշած:

Էլ չըդիմացաւ սարկաւագ-քեռին, որ Պանիօրը մանրամասն  
պատմէ, իսկոյն գնաց գրկեց մանկանը, համբուրեց և ասաց.

— Ի՞նչու, զաւակս, դու չէիր յայտնում:

Մանուկը լոեց: Նա չէր կամեցել նոյն իսկ իր պաշտպանութեան  
համար պատմել տեսածը, որովհետեւ նախ չէր կամենում իրան լրտես  
անւանեն և երկրորդ լաւ համոզւած չէր, թէ քոյրերից որն էր խըն-  
ձոր վեր առնողը:

Այս հանգամանքը իրան-ասածի մանկանը շատ բարձրացրեց ամ-  
րող ընտանիքի առաջ: Սարկաւագը մի առանձին ուշադրութեամբ  
սկսել էր դիտել մանկան վարք ու բարքը, և մեռնելիս ասաց, որ  
նրա ապագան ապահովւած է և թէ նա է լինելու իրանց ընտանիքի  
վլուխը և ոչ թէ իր աւագ Յովսէփի եղբայրը:





### ԱԿՊՈԼԵՆ ՌՕՆԱՊՈՐՏԸ

ԲՐԻՔՆԻ ՈՒԽՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ  
Նկար Դումասի Տրետևակովի պատկերսրահում:

### ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՇՆՆԴԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

1785

Թւի ամառն էր: Զինորական ուսումնարանի արձակուրդները պիտի սկսւէին: Մի խումբ պատանիներ հաւաքւած խորհրդակցում էին:

— Պարոններ, ճառախօսում էր նրանցից մէկը, ձեզ այստեղ ժողովեցի, յայտնելու որ վազը մեր գերմաններէնի ուսուցչի ծննդեան տարեղարձն է: Ես կարծում եմ, որ մեզ պէսք է այդ մասին մտածել և մեր յարգանքը նրան մատուցանել: Իմ կարծիքով յարմար կըլինէր մի հանդիսաւոր ընթրիք սարքել: Դուք, պարոններ, ի՞նչ կասէք:

— Հիանալի, շատ հիանալի միտք, համարեա միաձայն պատասխանեց պատանիների ժողովը:

— Ի՞նչ ասել կուզի, հիանալի շատ հրաշալի միտք, բացականչեց ժողովականներից մէկը:

— Անա և մեր սրախօսողը, առաջ, բարեկամ, պատասխանեց մեր նախածանօթ, բարանձաւի մէջ մտորող մանուկը, որ այժմ պատանեկական հասակումն էր, ու մի մազի չափ անգամ չէր փոխել իր բնաւորութիւնը:

— Ի հարկէ սա ուրիշ կերպ էլ անկարող է վերաբերւել, պատասխանեց ժողովականներից մի ուրիշը:

— Ի՞նչո՞ւ:

— Շատ պարզ է, որովհետեւ մեր գերմաններէնի ուսուցիչը լաւ

աչքով չէ նայում քեզ վրայ և դու նրան չես սիրում: Ի հարկէ ուրիշ բան կըլինէր, եթէ այս խնճոյքը սարքէր պատմութեան ուսուցչի համար, որ հոգւով սրտով զմայլում է և կարծես եօթներորդ երկնքումը նստած լինի, երբ դու պատմութեան դաս ես ասում, կամ թէ գրականութեան ուսուցիչ Դօմէզօնի համար լինէր, որ բերանի ջուրը գնում է, երբ սիրած հոետոր աշակերտը սիրում է այնպիսի ոգեսրութեամբ և պերճ լեզով իր համեմատութիւններն անել բորբոքած հրաբխի առաջնորդ... Մինչդեռ գերմաններէնի ուսուցիչ Բառէրը...

— Բառէրը ի՞նչ, սառնասրտութեամբ հարցը պատանին, ասա Բառէրը ի՞նչ:

— Գիտես ի՞նչ, բարեկամս, և իր խօսակցի ձեռքը բռնելով մի անկիւն քաշւեց: Այդտեղ նրան իբրև գաղտնիք յայտնեց, որ գերմաններէնի ուսուցիչը նրա վրայ վատ համարում ունի, որովհետեւ ուսուցչի կարծիքով միւս առարկաները և լեզուները գերմաններէնի համեմատութեամբ զերծ են, և իբր թէ նա յաւիտեան պիտի թերուս մնայ: Ի հարկէ դու էլ գիտես, ես էլ, աւելացը խօսակիցը, որ դա թիւր կարծիք է, բայց մենք խօմ մարդու համոզմունքը փոխողը չենք:

Պատանին ինքնավստահ կերպով ժամաց:

— Ուրեմն, հոգիս, կըմանակցես տօնախմբութեանը: Զէոր դրանով մենք կապացուցանենք թէ գիտենք յարգել մեր արժանաւոր ուսուցիչներին:

— Շատ լաւ, կըմանակցեմ, միայն մի պայմանով, որ ոչ թէ ընթրիք, այլ զինորական մի հանդէս տանք ի պատիւ նրա:

— Եւ ի հարկէ, որ դու դարձեալ անցեալ տարւայ պէս գեներալ լինիս, հա:

— Ինչո՞ւ չէ, հպարտութեամբ պատասխանեց պատանին:

Ես համաձայն եմ, և ընկերներին կանչելով ու յայտնելով նոր առաջարկութիւնը, յիշեցրեց նրանց անցեալ ձմեռւայ հանդէսը, թէ ինչպէս էր իրանց զեներալը տուածնորդում զօրքին, ամբութիւններ շինում, յարձակումներ անում, պաշարւում և պաշտպանում ու այնպէս ոգեսրեց պատմիչը իր ընկերակիցներին, որ նրանք բոլորը միաձայն հաւանութիւն տալով այդ առաջարկութեանը, այնուամենայնիւ շատ իւղալի համարեցին մի գերմանացու համար այդ տեսակ տօնախմբութիւնը, և դարձեալ իրանց որոշած ընթրիքը յարմար համարեցին սարքել: Պատանիները որոշեցին որ թող իւրաքանչիւր հոգի քսանուհինդ ֆուանկ վեր գայ, որով կարելի լինի մի վայելուչ խնճոյը սարքել:

— Քսանուհինդ ֆուանկը շատ է, տամնուհինդն էլ բաւական է:

— Եղբայրք, մարդը տասնուհինդ ֆռանկով ի՞նչ խնճոյք կըսարք-  
ւի, ընդամենը տասնուհինդ հոգի ենք մեր դասարանցիքս: Դու էլ  
Մարէլ, հէնց բերանդ եկածը, առանց մտածելու, ասում ես. տաս-  
նուհինդ ֆռանկն ի՞նչ է, որ նրանով գլուխ բերւած խնճոյքն ի՞նչ լինի:

— Իսկ դու, Լարիբուսէր, հէնց միշտ մեծ-մեծ ես բրթում, ախր  
դու էլ մի մտածի տես, բոլորեքեանք կարող են այդքան վճարել:  
Կարծես հէնց ես ու դու ենք միայն այստեղ:

— Թող վճարեն միայն նրանք, որոնք կարող են, պատասխանեց  
Ռոլանդ Վիլարսօն:

— Ուրեմն ընթրիքին էլ կըլինին միմիայն նրանք, որոնք կարո-  
ղացած կըլինին վճարել, խնդութեամբ աւելացրեց մեծ գլխանի պա-  
տանին:

— Ո՞չ, այդ անկարելի է, ընթրիքին բոլորեքեանքն էլ պիտի ներ-  
կայ լինին, ասաց Վիլարսօն:

— Քո ասելով հարուստները պիտի չունեղների համար էլ վճա-  
րեն, վրայ բերեց պատանին:

— Անպատճառ, միաձայն բոլորեքեանք պատասխանեցին:

— Երբէք, այդ անկարելի է:

— Կարծես քեզ համար միևնոյն չէ. մենք խօմ քեզանից ոչինչ  
չենք պահանջում, մենք կըվճարենք ի հարկէ և քեզ համար:

— Այդպէս ես չեմ ցանկանում, հպարտ պատասխանեց պա-  
տանին:

— Դէ դու քեզ համար վճարիր:

— Բայց քանի որ անկարող եմ:

— Ի՞նչ գոռոզն ես, եղբայր, կարծես թէ աղքատ լինելը մեղք է:

— Մեղք չէ, բայց ինչ կուզես ասա, շատ և շատ ծանր է խոս-  
տովանելը:

— Եւ ով է պահանջում որ դու խոստովանես: Գէտւիլը մեր մէջ  
բոլորից հարուստն է, նա կըհոգայ բոլոր ծախսերը և խնճոյքից յետոյ  
ով կարող կըլինին նրան կըվճարէ իր բաժինը:

— Ես հիւր կըլինիմ, ժողովականներից մէկը առաջ գալով ասաց.

— Իսկ ես ոչ հիւր և ոչ տէր, դարձեալ նոյն յամառութեամբ  
պատասխանեց պատանին:



ՆԱՊԱԼԵՕՆ ԲՈՆԱՊԱՐՏԸ

ՅՐԻԵՆԻ ՌԵՍՈՒԹՅԱՆՈՒՄ 1782 թ.

Զ.

## ԿԱՄՔԻ ՈՅՉԸ



ՆԱՊԱԼԵՕՆ

Աշակերտ Բրիննեռում

Արձան Բօք

Վերսայի մուզեյ


1785 թ. սեպտեմբերի մէկին յամառ, գոռող  
պատանին փառաւոր քննութիւն տւաւ և տաս-  
նուվեց տարեկան հասակում աւարտեց զինու-  
րական ուսումնարանը: Ուսման վերջին շրջա-  
նում, պատանին մի ծրագիր ներկայացրեց զին-  
ուրական նախարարին, մանրամասն նկարագրե-  
լով այն անյարմարութիւնները, որոնց մէջ  
գտնուում էին իրանց զինուրական ուսումնա-  
րանը և աշակերտները: Նրա կարծիքով զինու-  
րացուն պիտի վարժւի խիստ կեանքի և ոչ թէ  
անդորրութեան ու փափկութեան: Նա առա-  
ջարկում էր, թէ զինուրական ուսումնարա-  
նում անհրաժշտ է, որ լինի հաւասարութիւն և  
հարուստն աղքատից չըջոկւի իր վարթամու-  
թեամբ: Նա ասում էր՝ աշակերտների մեծա-  
գոյն մասն աղքատ ընտանիքներից լինելով,  
այստեղ ընտելանում են վարթամ ու շրեղնիստ  
ու կացի, և միևնոյն ժամանակ հարուստների  
գաւակներն էլ կամայ թէ ակամայ խոնար-  
հում են և նրանց ստրկանում:

Մեր յամառ, հպարտ, մտորող պատանին կարողացաւ իր աշխատութեամբ ու տոկունութեամբ ձեռք բերել իր ցանկացած կամքը և այդ կամքով նախ և առաջ նա հիմնայատակ արաւ այն դպրոցը, որ Լիւդովիկոս ԽV-ից հիմնւած՝ չէր համապատասխանում իր նպատակին։ Այդ դպրոցում նա ուսանելով և ինքն էլ անձամբ շատ անգամ ենթարկվելով վիրաւորանքների, կործանեց և նրա տեղ հիմնեց իր ծրագրով Պարիզի զինուրական ուսումնարանը և ապա այդ ծրագիրը մտցրեց ֆրանսիական միւս դպրոցները։

Սակայն կամքի ոյժն այն աստիճան զօրեղացաւ նրա մէջ, որ առաջ բերաւ եսականութիւն։ Եւ նա, որ ճգնում էր հաւասարութիւն զցել բոլոր ընկերների մէջ, չքացնել վիրաւորանք ու ստութիւն, ինքն էլ շացաւ եսական աշխարհի ժամանակաւոր հաճոյքներով և նրա ուժեղ կամքը ստեղծեց այն Նապալեօն Մեծը, որ մարդկութեան պատմութեան մէջ կամքի ոյժի ամենամեծ և ամենահզօր ներկայացուցիչն է։



ՆԱՊԱԼԵՕՆ ԲՈՆԱՊԱՐՏ




ՀՀ Ազգային գրադարան

NL0398908



1



8456